

էին: Եւ իբրեւ հասին ի տեղիսն՝ երկու իրեք տեղաց թօբերն թողին ի վերայ նոցա. որք 40 սատակեցան անդ է՛մ հողի Տաճկաց. եւ այլ տեղաց նէ՛մցայք ելեալ կոտորեցին զնոսա եւ զորս ըմբռնեցին ի մեծաց Ապաղու քոջ՝ որդին եւ զայլ մեծ մարդիկն. զՍան Դէմիրին փեսան եւ զեղբայր եւ զբազում թաթարս 45 սպանին եւ զորդի նորա: Եւ զայն տեսեալ պղծոյն ահ եւ երկեղ անկաւ ի վերայ նոցա. եւ փախուստ դարձան ընդ կրունկս եւ ամօթալից տրամութեամբ սեւերես զնացին յաշխարհն իւրեանց: Իսկ քրիստոնեայք ուրախութեամբ եւ ցնծութեամբ դարձան իւրաքանչիւր ի տուն օրհնելով, զովելով եւ զոհանալով զԱստուծոյ, որ տայ յաղթութիւն հաւատացելոց իւրոց. փա՛ռք Աստուծոյ: Եւ աշխարհն լէհու ամէն քաղաք տօնանմա եղեւ: 55

Ե. ԱՐՇԱԽԱՆՔ ՍՈՒԼՏԱՆ ՄՈՒՐԱՏԻ Ի ՎԵՐԱՅ ԼԵՀԱՅ

Իսկ Սօլթան Մուրատին սիրտն դարձեալ չի խաղաղացաւ ի չարեաց. այլ կրկին անկաւ զնալ ի վերայ Լէհու. եւ Պուլտանայ պարոն, Ղարաֆլահու պարոնն ըմբռնել եւ սպանանել, որ նենկեցին զԱպաղան. ապա թէ ոչ առել էր 5 պլէհ: Վասն որոյ ուրախացեալ լսելով ստասաց խարողին՝ հրաման եհան կանչել սէֆէր ի վերայ Լէհու. եւ կամուրջ շինել ի վերայ Թունայի, ուստի թօբերն եւ լէշքէրն անցնի: Եւ նախ թարթարին ասաց մտնել երկիրն Լէ- 10

44 մարդիքն: — 53 տա:

3 ի վերա... պուլտանա: